02.10.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2020 թվականի N 1630 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին 2020 թվականի հոկտեմբերի 6-ի վերջին հիմնական նիստի ավարտից անմիջապես հետո գումարել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

(Կ-753-02.10.2020-ՏՀ-011/0)

(առաջին ընթերցում)

(երկրորդ ընթերցում)

2) «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

(Կ-754-02.10.2020-ՖՎ-011/0)

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի նախաձեռնողի ներկայացուցիչ նշանակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնել՝

1) «2020 թվականի հոկտեմբերի 6-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի հոկտեմբերի 6-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային 1-ին հարցի քննարկման հետևյալ ընթացակարգը՝

1) երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի հոկտեմբերի 6-ին գումարված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային 2-րդ հարցի քննարկման հետևյալ ընթացակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ պետական ֆինանսների կառա-

վարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը ներկայացնում է հիմնական զեկույցը՝ մինչև 15 րոպե տևողությամբ.

2) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողի համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝

ա. հարցերի համար՝ երկուական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

3) մինչև վեց րոպե տևողությամբ հարակից զեկույց է ունենում գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար.

4) հայտ ներկայացնելու դեպքում մինչև 6 րոպե տևողությամբ ելույթներ են ունենում խմբակցությունների մեկական ներկայացուցիչներ.

5) մտքերի փոխանակության ելույթների համար նախատեսվում է վեցական րոպե ժամանակ.

6) մտքերի փոխանակությունն ավարտվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով.

7) մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 7 ժամ.

8) նախագծի քննարկումն ընդմիջելուց հետո նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկների և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար նախատեսվում է երեքական ժամ.

9) «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումը վերսկսվում է սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով նախատեսված ժամկետը լրանալուց անմիջապես հետո.

10) հիմնական զեկուցողին նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնելու համար տրամադրվում է մինչև 15 րոպե ժամանակ.

11) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողի համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝

ա. հարցերի համար՝ երկուական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երեքական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

12) հայտ ներկայացնելու դեպքում մինչև վեցական րոպե տևողությամբ մեկական ելույթ են ունենում՝

ա. նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները,

բ. խմբակցությունների մեկական ներկայացուցիչներ,

գ. գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը,

դ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները.

13) եզրափակիչ ելույթների համար նախատեսվում է մինչև 10 րոպե ժամանակ: